

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

**2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ֆինանսական հաշվետվություններին կից
հայտարարություններ**

Բովանդակություն

Բանկի ղեկավարության հայտարարությունը.....	2
Համապատասխանության մասին հայտարարություն	3
Եզրակացություն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ.....	4
Գործունեության ակնարկ և ֆինանսական վերլուծություն.....	5

Բանկի ղեկավարության հայտարարությունը

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվություններին պատրաստման համար: Այդ կապակցությամբ բանկի ղեկավարությունը պատասխանատու է՝

հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,

հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման, իսկ շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից դրանց բացահայտման համար,

ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա պատրաստելու համար, բանի դեռ հանգամանքներն այլ կերպ չեն թելադրում,

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման, իսկ չհամապատասխանելու դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից այդ թերությունների բացահայտման համար,

Բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, ՀՀ օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,

Բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:



Իրինա Սեյլանյան
Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար



Աստղիկ Դրամբյան
Գլխավոր հաշվապահ

Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ արտացոլում են Բանկի ֆինանսական վիճակը առ 31 դեկտեմբերի 2009թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը:

**Եզրակացություն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված բանկերի
ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին
համապատասխանության վերաբերյալ**

Մույն եզրակացությունը կազմված է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից 2009թ. ընթացքում իրականացված պլանային ստուգումների և ընթացիկ վերահսկողության հիման վրա: Այս եզրակացության պատրաստման համար հաշվի է առնվել նաև 2009թ.-ին «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը խմբի աուդիտի կողմից կատարված ստուգումները:

Հաշվի առնելով վերոնշյալը, մեր կարծիքով «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի գործունեությունը 2009թ. ընթացքում համապատասխանել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի ստորաբաժանում

Գործունեության ակնարկ և ֆինանսական վերլուծություն

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն տրամադրում է ֆինանսական ծառայությունների լայն ընտրանի: Պահպանելով իր կայուն ֆինանսական վիճակը՝ 2009 թվականին Բանկը շարունակեց ընդլայնել իր գործառնությունների շրջանակը:

Գործունեության տասնչորսերորդ տարվա ընթացքում Բանկին հաջողվեց զարգացնել իր կողմից առաջարկվող ծառայությունները և ավելացնել հաճախորդների քանակը:

2009 թվականը կարելի է որակել որպես մարտահրավերների տարի ոչ միայն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի, այլ նաև Հայաստանի Հանրապետության ամբողջ տնտեսության համար: ՀՆԱ -ի կրճատումը և ազգային արժույթի արժեզրկումը 2009թ.-ին զգալի ազդեցություն ունեցան Հայաստանի Հանրապետության տնտեսության և բանկային համակարգի վրա, ինչի արդյունքում բանկերը հիմնականում որդեգրեցին վարկավորման պահպանողական քաղաքականություն:

Բանկի տարվա ամենամեծ նվաճումներից է Հայաստանում հեռախոսային և ինտերնետային բանկային ծառայությունների գործարկումը, որը հաճախորդների սպասարկումը հասցրեց որակապես նոր մակարդակի: Արդեն իսկ զբաղեցրել են ավելի քան 12,600 ֆիզիկական անձ հաճախորդներ հեռախոսային բանկային ծառայությունից և 2,000 ինտերնետային բանկային ծառայությունից օգտվելու համար: Այն հնարավորություն է տալիս հաճախորդներին կառավարել իրենց հաշիվները ցանկացած վայրից և օրվա ցանկացած ժամին (իրականացնել ցանկացած անկանխիկ գործառնություն՝ կատարել փոխանցումներ, կոմունալ վճարումներ, բացել հաշիվներ, ժամկետային ավանդներ և կատարել արտարժույթի փոխանակում) :

Նոր տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև ընթացակարգերի և պրոցեսների վերանայումը և օպտիմալացումը թույլ տվեցին բարելավել Բանկի հաճախորդների սպասարկման որակը և արդյունավետությունը: Նշված բարելավումները հանգեցրեցին հաճախորդներից ներգրաված ավանդների ծավալի զգալի աճի, որը 2009թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 111.4 մլրդ ՀՀ դրամ:

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի ընդհանուր ակտիվները կազմել են 135.8 մլրդ ՀՀ դրամ, և ակտիվների մեծությամբ Բանկը շարունակում է մնալ խոշորագույններից մեկը ՀՀ բանկային համակարգում:

2009թ. ին Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն հռչակվել է «Տարվա Բանկ» Լոնդոնի The Banker ամսագրի կողմից, Նյու Յորքի «Գլոբալ Ֆայնենսի» կողմից Բանկը ճանաչվել է Տարվա լավագույն բանկը Հայաստանում, «2009թ. Աշխարհի Չարգացող Շուկաների Լավագույն Բանկն Ասիայում» մրցանակարգում:

Այնուամենայնիվ, այս արդյունքներին հնարավոր չէր լինի հասնել առանց բանկի թվով 49,200 հաճախորդների գործարար հաջողության, վստահության և աջակցության, ինչպես նաև առանց Բանկի թվով 368 բարձրակարգ աշխատակիցների անսահման ջանասիրության:

Հատկանշական է նաև Բանկի կորպորատիվ պատասխանատվության ծրագիրը, որի շրջանակներում Բանկն իրականացնում է ներդրումներ ինչպես Հայաստանում մշակված ծրագրերում, այնպես էլ մասնակցում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի կրթական և բնապահպանական ծրագրերի իրականացմանը Հայաստանում: Օրինակ՝ մասնակցությունը World Environment Day և Earth Hour ծրագրերին, HSBC Climate Partnership ծրագրին Բանկի 5 աշխատակիցների մասնակցությունը, ինչպես նաև ծառատունկների կազմակերպումը: Բանկը, հանդիսանալով Էյչ-Էս-Բի-Սի Խմբի Future First Program-ի գործընկեր, իր 15 աշխատակիցների միջոցով մասնակցել է Junour Achievement Armenia (JAA) ծրագրին՝ իրականացնելով մի շարք դասախոսություններ Հայաստանի հեռավոր մարզերի դպրոցներում: Բանկի կողմից ստորագրվել է համագործակցության համաձայնագիր «Հայաստանի Մանուկներ» Հիմնադրամի հետ, որն ուղղված է ընդդեմ պլաստիկի հասարակության գիտակցության բարձրացմանը: Բանկի բազմաթիվ աշխատողներ և հաճախորդներ միացել են «Ճաղախիքներ և գրքեր» մարզերում ապրող ընչազուրկ երեխաների համար ծրագրին: Պարբերական բնույթ են ստացել բնապահպանական և այլ հիմնախնդիրներին հասարակությանը իրազեկելու նպատակով կազմակերպվող

հանգանակության ծրագրերը, որին մասնակցում են ինչպես Բանկի աշխատակիցներ, այնպես էլ հաճախորդներ:

Ֆինանսական վերլուծություն

Հարկերի վճարումից հետո Բանկի զուտ շահույթը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմել է 1,617 մլն դրամ, որը զգալիորեն ցածր է անցյալ տարվա արդյունքներից՝ 2009թ.-ի առաջին եռամսյակում ՀՀ դրամի զգալի արժեզրկման արդյունքում արտարժույթի վերագնահատումից առաջացած վնասների պատճառով: Հիմնական գործունեությունից շահույթը մինչև հարկումը (բացառելով ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով վերագնահատումից վնասը) կազմել է 3,574 մլն դրամ: Ձուտ տոկոսային եկամուտը և գործառնական այլ եկամուտը կազմել են համապատասխանաբար 7,618 և 1,864 մլն դրամ: Գործառնական ծախսերը կազմել են 6,528 մլն դրամ: Ծախս/եկամուտ հարաբերակցությունը 2009թ-ի համար կազմել 68.8%, իսկ կապիտալի եկամտաբերության ցուցանիշը՝ 10.6%:

2009 թվականին բանկը չի վճարել շահաբաժիններ՝ շահույթն ուղղելով Բանկի հետագա զարգացմանը: Բանկի համար ներդրումների հիմնական ոլորտը նոր տեխնոլոգիաներն են: Զբաղիված շահույթի նշանակալի մասը (5,119 մլն դրամ) տարվա ընթացքում ուղղվել է կանոնադրական կապիտալի համալրմանը:

Իրինա Մելանյան
Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար

